բայելի հին թագաւորութիւնները ունէին պալատական ժամանակագիրներ։ Թէպէտ նրանք իրանց ժամանակագրութիւնը վարում էին վաղուց արդէն փթած մագաղաթների վերայ, այնու ամենայնիւ գուցէ մի քանի համառօտ ցուցմունքներ գրուած լինեն քարեայ կամ խնկեայ տախտակների վերայ։ Հնոանկարը (պերսպեկտիվա) յամենայն դէպս, հնախօսներին հրապուրելու համար բաւական դրաւիչ է։ Մանաւանդ որ այն բլրի, որի վերայ կատարում են պեղումները, միւս մասերը բացի դրանից բռնադակել աւելի թանկագին գանձեր քան Հերոդէսի տաճարն է և Աքաբի պալատը։

Ընդհանրապէս, ինչպէս իրաւացի նկատում է պրոֆեսսոր Լայօն, Սամարիան այժմ, համեմատութեամբ հռոմէական և յունական պեղումներին, անհամեմատ աւելի հետաքրքիր է։ Այժմ շատ հարուստ ենք կլասիքական երկրի մնացորդներով, մինչդեռ, չնայելով Պաղեստինում արդէն կատարուող հնախօսական բազմաթիւ վաստակներին, Սամարիայում պեղումները առաջին անգամ է, որ յաջողութեամբ շարունակուելով լոյս աշխարհ պէտք է հանեն վերին աստիճանի թանկագին յիշատակարաններ հին հրէական քաղաքակրթութեան վերաբերութեամբ։

Թարգմ. Գ. Ա. Ե.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Հառինայի վանքի հաշիւը 1910 թուին.

ՄՈՒՏՔ.

1.	Սօուզպուլաղի Զայիրից (ունի ստանալու 75 ռ.]. ստացել է. . . .	575— »
2.	Ս. Աստուածածնի գանձարանից, Մոմավաճառումից քաղաքում . . .	482— »
3.	Ս. պատկերի շրջեցումից (խալերայի առթիւ)	1496— »
4.	Նուշպաներից 34 ռ. Ղբչաղ. մոմավ. 6 ռ.	40— »
5.	%% նեբից	17— »
6.	Լուսագին Ղբչաղից	4— »
7.	Անասունների վաճառումից . . .	161— »
8.	Իւղ, պանիր, գարի ցորեն . . .	32— »
9.	Աշակերտական թոշակ . . .	263— »
10.	Զանազան նուէրներ	39—82
	Գումարը	4009 ռ.—82 կ.

1910 թ-ի յունուարի 1-ից մինչի 1911 թ. յուն. 1 ը. մուտք է ունեցել . . . 4009—82

ԵԼՔ.

1. Ուս. խմբին	2000— »
2. Վարդապետին ոնդ. փոխարէն նիւթեղէնով երկու ծառաներին, իր աղջկանով. պատահական հիւրերի*	220— »
3. Վերանորոգութեան	230— »
4. Պետական հող. հարկ. կոնսիստ. . .	144— »
5. Դպրոցի ձրիավարժ. դասագ. ցուց. կանցելար.	58— »
6. Քարածուխի 1910 և 1911 թ համար .	180— »
7. 1910 թուից պարտք 40 ռ. բահրաջի 22. հատ. 5. մշահներին վարձ, հանդերձագին. դպրոցի ծառայի . . .	187—»
8. Կառքերի (ճանապարհածախք) և այլն .	108— »
9. Թագին, վակասին, շապիկին իրեղէններին	20— »
10. Խոտ	34—56
11. Անասուններ գնել ենք . . .	154— »
12. Վանահոր պաշտօնակատար վարդապետին հանդերձագին	50— »
Գումարը	3384—56

4009 ռ. 82 կ. մուտքից հանելով ելքը 3384 ը. 56 կ, առ 1-ն յունուարի 1911 ը. կը մնայ դրամով 625 ռ. 20 կ. որի 600 ռ. գանուում է Աղէք. բանկում. ուր դրուած է արժ. Տէր Մ. ա. ք. Տէր Պօղոսեանի ձեռամբ, որ և վարել է մուտքի և ելքի և առհասարակ բոլոր հաշիւները:

Ներկայումս արդէն Փոխ. Թեմ. հասատաել է նշանակովի հոգաբարձուներ՝ լինն աշխարհականներից, երկու քահանաներից և մի վարդապետից:

Վանքը ունի 4 եղ, 6 կով, մի մատակ, մի ձի, 5 հոբթ, 3 աւանակ:

Ներկայումս կայ մատաւորապէս 17 սոմար գարի, 15 սոմար ցորեն:

Երեմիա վ. Սեբիանեան.

1911 թ. 9-ն փետր.

---

* Այդ հաշուի մէջն է լուսաւորութիւն. սապոն. աղ. ինքնաեռի ածուխ. լուցկի եւն:

** Կոպէկները չենք հաշուել. միացրել ենք: